

Տ. ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Ծնվել է 1959 թ. Էջմիածնի շրջանի Հաթաղ գյուղում: Ավագանի անունը եղել է Սմբատ: 1976 թ. բարձր առաջադիմությամբ ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը և նույն տարին ընդունվել Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1980 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, Տ. Հուսիկ արքեպիսկոպոսի կողմից ձեռնադրվել է սարկավագ Ս. Էջմիածնի Մայր տաճարում:

1982 թ. փայլուն հաջողությամբ ավարտել է հոգևոր ճեմարանի լրիվ դասընթացը և հաջորդ տարվա մարտ ամսին, հոգևոր ճեմարանի հարկի տակ, պաշտպանել «Գրիգոր Նարեկացին և Թոնդրակյան շարժումը» թեմայով իր ավարտաճառը՝ արժանանալով «գերազանց» գնահատականի:

Տ. Ասողիկ աբեղան օժտված է գրական ձիրքերով: Գրում է բանաստեղծություններ, իր աշխատակցությունը բերում նաև Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրին:

1982 թվականից առ այսօր աշխատում է Վեհարանում՝ որպես քարտուղար: Երևանի պետական համալսարանում մասնակցել է հայագիտական որոշ առարկաների դասընթացներին՝ որպես ազատ ունկնդիր:

1983 թ. հոկտեմբերի 16-ին Մայր տաճարում, Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով, ձեռնադրվել է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանի: